


WB



Ա.Ս.ՆՈՎԻԿՈՎ-  
- ՊՐԻՔՈՅ

# ԾԱՀՃՈՒՏՈՒՄ

ՀԱՅՊԵՏՆՐԱՏ

891. 715

Ա. Ս. ՆՈՎԻԿՈՎ-ՊՐԻՐՈՅ

30 MAY 2011

G-91

# ՃԱՅՃՈՒՏՈՒՄ

Քարտիչ. Հ. Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Նկարները Ս. ԲՈՒՍԻ



9013-65

4961

А. С. НОВИКОВ-ПРИБОЙ  
СРЕДИ ТОПИ  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



60133-67

Գլավխիտի լիազոր՝ Զ-1079. Հրատ. 5128.  
Պատվեր 50. Տիրած 4000.  
Փուղթ 62x94. Տպագրական 2 1/2 մամուլ.  
Մեկ մամուլում 24,480 նշան.  
Հանձնված է արտադրության 10 հունվ. 1940 թ.  
Ստորագրված է տպագր. 29 փետրվարի 1940 թ.  
Հայկեանրատի տպարան, Յերևան, Լենինի, 65.

Սեպտեմբերի կեսն է, բայց անտառում ամառվա ողես  
տաք է: Բազմաճյուղ ծառերի վերեր պարզ կապույտն է՝  
առանց վոշ մի ամպի: Խիտ ծառերի միջից վոսկե ման-  
վածք է հոսում: Կանաչը, շողշողալով, արդեն վառվում է  
զեղին ու բոսոր գույներով: Արևն աշնան հագուստներ է  
գործում: Անուշաբույր քամին խճճվում է ճյուղերի մեջ,  
շրջյունով պոկոտում է չորացած տերևները և, կարծես  
զվարճանալով, յերկար ժամանակ պտտում է նրանց ողում:

Յերկու վորսորդ վոտներով խշխշացնում են թափված  
տերևների վափուկ գորգի վրա: Յերկուսն էլ թրջվել են  
քրտնից, յուրաքանչյուրի ուսին, պալուսակի մեջ, տաք  
հագուստ և ուտելիք կա, իսկ ձեռներին՝ պատրաստ դը-  
րությամբ մի-մի հրացան: Առջևից քայլում է Մաքսիմիչը,  
գեր, միջահասակ մի գլուղացի: Նա անտառապահի տղա  
յե, ծնվել ու մեծացել է անտառում և փոքրուց զբաղվել  
է վորսով: Հիմա նա արդեն մոտ 40 տարեկան է: Նրան  
ծանոթ են այստեղի բոլոր վայրերը, ինչպես իր կիսաբաց  
բակը, ծոված և ժամանակի ընթացքում սևացած խրճի-  
թով: Նա գիտի բոլոր վորսերի սովորությունները, ինչպես  
իր շառատ զամբիկինը: Նրա յետևից, հաճախ սայթաքե-  
լով, քայլում է տասչորս տարեկան Կոլյան: Այս փոքրիկ,  
շիկահեր մարդը մալրաբաղաբի բնակիչ է, վորն ընկել է  
անտառի խորքերո իր հոր բարեկամների միջոցով:

Չնայած հոգնածությանը, նա այնպիսի տեսք ունի,  
վոր կարծես թե նվաճել է ամբողջ Յեվրոպան: Միթե նա  
խկական վորսորդ չէ, քանի վոր նրա ձեռքին 24 արա-

մաշափի Փրանսիական հրացան կա, իսկ կողքին կախված են յերկու սայամբ: Ճիշտ է, այդ սայամբներին հրապուրել է Մաքսիմիչը, բայց դա կարևոր չի. չէ՞ վոր նրանց բնուամենադիմիկ հոլլան է սպանել:

Մաքսիմիչը և հոլլան արդեն յերկրորդ տարին և, ինչ բարեկամութուն են անում: Նրանք չեն կարողանում մեկն առանց մյուսի յուր գնալ: Յերիտասարդ վորսորդը քաղաքից բերում է վորսորդական պարեն, իսկ Մաքսիմիչը ծանոթացնում է նրան իսկական վորսորդությանը: Վորսը, անկախ նրանից թե ով վորքան է սպանել կրտում են:

Յրկու որ է, ինչ նրանք վորս են վորոնում, տակն ու վրա ելին արել շատ լճեր, բայց իզուր: Իսկ բազերը, հեռանալու պատրաստվելով, յերամներով թաքնված են մտտիկում ինչ վոր տեղ, վոչ ավելի քան մեկ քառակուսի վերստ տարածության վրա: Յեվ միայն յերեկ յերեկոյան վերջապես գտան: Մաքսիմիչը բարձրացավ ամենաբարձր յեղևնու վրա, հագիվ անցնելով նրա վշոտ տերևների միջից և հայտնվեց անտառի զլխին: Մայրամուտին նա հրձվանքով գոչեց բարձրից.

— Ահա, մի արտել բարձրացավ:

— Վերտեղից, — հարցրեց հոլլան:

— Սատանի վորջից:

— Իսկ դու ինչ գիտես Մաքսիմիչ, չէ՞ վոր այստեղ շատ լճեր կան:

Մինչև այժմ յես չեմ սխալվել:

Մի քանի րոպեյից հետո ավելի զմայլված և բարձր ձայն յսվեց.


— Նայիր, նայիր, դարձյալ մի խումբ: Ամպ և

Ուրախությունից հոլլան թռչկոտում էր:

— Ա, թե կվ բանք, հա:

Իջնելիս, Մաքսիմիչը զարմացրեց իր բարեկամին, նա

արագ, կարծես ճյուղնապատ սարից, ցած եր սողում յեղևնու ճյուղերի ծայրերով, բռնելով նրանցից: Յերևան



Գնում են դանդաղ, ահանջները սրած անտառի լուսքյանը:

Հուլիսը բարձրացնելով, սարսափով դիտում էր՝ անա վայր կընկնի:

Այսօր, կարմիր վորս անելուց հետո, նրանք ուղղվում

են դեպի Մատանի փորջր: Շտապելու կարիք չկա. կեսորը դեռ նոր է անցել: Քայլում են դանդաղ, ականջ դնելով խիտ անտառին:

Մաքսիմիչը, դառնալով դեպի փոքրիկը, ժպտում է.

— Չե՞ս հոգնել, յեղբայր:

— Սի բիչ:

Մաքսիմիչը կյորադեմ է, մի քիչ չեչոտ, փոքրիկ նոսր բեխերով: Անտառում նրա դեմքը միշտ հանդիսափոր—պայծառ արտահայտութուն է ստանում:

— Այտեղ մոտիկ մի լիճ կա, վորտեղ միշտ բաղեր են լինում: Անցնենք դեպի այն կողմը:

— Լավ,— համաձայնում է յերիտասարդ վորսորդը:

Լիճը շրջապատված է խոշոր անտառով: Միայն մի կողմից նրան դիմար է լինում մի բացատ, վորը վերջանում է մանր թփուտով: Այտեղից ավելի հարմար է վորսին մոտենալ: Յերկու վորսորդները կռացած, քայլում են կամաց և զգուշ: Գեղին-կարմիր հատապտուղներով ծածկված փոնչունն մոտենալով, Մաքսիմիչը բարձրանում է, անբնական ձևով յերկարացնում վիզը: Նրա գորշ աչքերը խուզարկում են ճահճային խոտերով ծածկված ջրե մակերևույթը:

— Մեկը կա,— շշնջում է նա:

— Վերտեղ,— հուզվելով հարցնում է Կոլյան:

— Նայիր իմ ձեռքի ուղղությամբ:

— Տեսն, տեսն: Կրակեմ:

— Կրակիր:

Հրացանը պայթեց: Լճի վրա պտտվելով, ծփում էր բազը:

— Դիպավ, դիպավ,— գոռաց Կոլյան:

— Ապրես,— հավանութուն տվեց Մաքսիմիչը:

Սպանվածը մայր բազ էր: Բայց թե ինչպես վերցնել: Շուն չկա, իսկ մարդկանց համար վտանգավոր

է այնտեղ մտնել՝ խոր է և ճահճային խոտի մեջ հեշտությամբ կարելի չէ խճճվել:

Կոլյայի ուրախութունը հուսահատության է փոխվում:

— Ի՞նչ է, Մաքսիմիչ, ուրեմն մեր բազը կորավ:

— Կորչելը յերբեք չի կորչի: Միայն ափսոս, վոր շատ ժամանակ պիտի կորցնենք:

— Արի հանենք:

Մաքսիմիչը հանկարծ հարցնում է.

— Ուզո՞ւմ ես, քո բազն առանց մեզ ափը դուրս գա:

Տղան աչքերը լայնացնում է.

— Այդ ի՞նչպես պիտի անես: Նա արդեն փորը դեպի վեր ջրջեց, Մատկել է:

— Ուրեմն, ավելի լավ: Գործն ավելի շուտ կհաջողվի:

— Ճիշտ, Մաքսիմիչ:

— Սերուցքով խեղդվեմ, թե սուտ եմ ասում:

Յեվ մի քիչ մտածելով, ավելացնում է.

— Ասենք, զուր եմ շատախոսում: Ավելի լավ է արի նախաճաշենք և նստենք: Գուցե ելի բաղեր գան: Այն ժամանակ կհանենք: Թե չե մեկի համար չարչարվել չարժե:

Յերկուսն ել պահվեցին թփերում: Ավագ վորսորդը պառուսակից հաց է հանում, իսկ կրտսերը՝ խոզի ճարպե լուությամբ վոչնչացնում են ուտելիքը: Մաքսիմիչը, դիտելով լիճը, ինչ վոր նպատակով հրացանը պատրաստ է պահում, իսկ տղան նայում է նրան, չհասկանալով, թե ինչու յե նա լարում իր ուշադրութունը: Յերբեմն Կոլյան հայացք է գցում սպանված բազի վրա. անշարժ պառկած է ջրի վրա: Անցնում է մի ժամ, գուցե և ավելի, վաղուց հաց կերել, վերջացրել են: Տխուր է: Մակայն Մաքսիմիչը խստապահանջ է. չի կարելի վոչ խոսել և վոչ ել շարժվել:

Հանկարծ թփերի միջից ինչ վոր բան յերևաց, քարի նման իջնելով լճի վրա: Յե՛վ անմիջապես տղան զգաց մեծ թևերի թափահարում: Մաքսիմիչն ամբողջովին լարվեց, կծկվեց: Նրա աջ ձեռքում հրացանը չխշխկաց: Հետե՛վյալ վայրկյանին նա գազանի ճարպիկությամբ դուրս ցատկեց թփերի տակից: Յերկու կրկնահատ կրակոցներ խլացրին անտառը: Այդ բո՛ւրն այնպիսի արագությամբ կատարվեց, վոր Կոլյան վոչինչ չհասկացավ:

— Ստացիր քո բաղը:

Բացատում իրար կողքի ընկած ելին բաղը և բաղեն: Փետրավոր գիշատիչը, արյունվիկ յեղած, անոգնուկանորեն թափահարում եր մի թևը: Ջղաձգորեն սեղմվեցին նրա ճանկերը, խրվելով խոտերի արմատների մեջ: Սրատես աչքերը միզապատվեցին հողևարքի ցավից և զայրուլթով նայում ելին վորսորդներին:

Ծառացած կանգնած եր Կոլյան ապշած և՛ վորսորդի ճարպիկութունից, և՛ լուռ մեռնող բաղեյից:

— Գնանք, — ասում ե Մաքսիմիչը, վերցնելով բաղը:

— Իսկ բաղեն չվերցնենք:

— Ինչներև ե պետք: Միայն ավելորդ ծանրություն կլինի:

Քայլելով Մաքսիմիչի յետևից, տղան մտածում ե, թե ինչպես ե վերադառնալու Մոսկվա: Այնքան նոր ապավորություններ կան: Իրեն լսելիս, ընկերները բերանները բաց կմնա:

Մոտ յերկու վերստ անցնելով, Մաքսիմիչը հայտարարում ե.

— Սատանի վորջը մոտ ե: Իսկ մենք այնտեղ պետք ե վինենք միայն յերեկոյան: Առայժմ հանգստանանք:

Ցած դնելով պալուսակները, վորսորդները ձգվեցին բացատում, հին, հաստ կաղնու մոտ, վորն այնքան հաստատ ու պինդ ամրացել եր գեանի մեջ: Դարեր են ան-

ցել, ինչ նա գցել ե իր առաջին արմատը: Վերջան ե մտածում դարձյալ ապրել աշխարհում:

Մաքսիմիչը, արևից աչքերը կկոցելով, հարցուփորձ ե անում քաղաքի մասին: Կոլյան սկզբում զփկամությամբ ե պատասխանում. չե՛ վոր անտառում չափազանց լավ ե Հիանում ե գույնավոր հագուստ հագած թղթիով: Ահա և լորին, վոր նոսրացել ե մյուս ծառերից շուտ: Աշունը կարծես նրա տերևների վրա ձյի դեղնուց ե լցրել: Բացատի մյուս ծայրում, խիտ և հյութալի կարմրին ե տալիս արոսներն, հեռվից բոցավառվող խարույկի նմանվելով:

— Գիտես թե հիմա ինչպիսի ուղիտ-հեռախոսներ են կառուցում:

— Ի՞նչպիսի:

— Այնպիսին, վոր հագար վերստ հեռավոր վայրից կարելի յե խոսել: Յերաժշտություն ել կարելի յե լսել:

— Սատանան տանի: Հազար վերստ:

Կոլյային դուր ե գալիս, վոր Մաքսիմիչը լսում ե իրեն: Պատմում ե մինչև հարյուր հոգի ճամբորդ վերցնող ողբանավերի և տեխնիկայի այլ հրաշքների մասին: Վերջապես հաղորդում ե գիտության շճեցուցիչ նորությունը, մարդկային որգանիզմի յերիտասարդացման մասին:

Մաքսիմիչը նույնիսկ վեր ե կենում տեղից:

— Ձե, դու կատակ ես անում:

— Ամենին վոչ:

— Ծերունուն կարող են յերիտասարդ դարձնել:

— Այո:

— Իսկ դու վերտեղից գիտես:

— Մոսկվայում մեր տուն ե գալիս մեր բարեկամ կին-բժիշկ Մարիա Ֆեոդորովնան: Նա պատմում եր այդ մասին մորս և հորս: Իսկ յես խնդիրներ եյի վրձում և ամեն ինչ լսեցի:

Մաքսիմիչը նորից պառկեց, վոտքերն ու ձեռքերը ձգելով:

— Այ թե ինչ գործեր կան: Տես թե վոտքեղ կարող են հասնել գիտնականները:

Յերկար ժամանակ լուռ էին, ունկնդրելով անտառի կամացուկ շարշուռներն: Կոլյան նայում է յերկնազուլն լուսաբացատներին: Պոկվելով հարազատ ճյուղերից, ընկնում են տերևները, իսկ նրան թվում է, թե վոսկի թիթեռնիկներ են ճախրում:

Հոգնած, արևի ջերմությամբ փաղաքշած տղան պինդ քնեց:

Յերկինքը շեղում է իր կրակե աչքը, յերկարացնելով սովերները: Քամին դադարել է: Վոչ մի ճյուղ չի շարժվում: Հյուսիսայնայնից և աննշմարելի կերպով թառամում է անտառը, խորասուզվելով իմաստուն հանգստի մեջ:

Քնից կշտանալով, վորսորդները գնում են դեպի Սատանայի վորջր: Նրա շուրջը կես վերստ տարածության վրա, իսկ յերբեմն և ավելի, անանցանելի ճահճուտ է, ուռուտ, սև լաստենու բաշեր: Լիճն անմատչելի չէ: Միայն Մաքսիմիչին է հայտնի մուտքը դեպի կենտրոն, վորտեղ ջրի պարզ մակերևույթն է, և ուր, գիշերային խնճույքից վերադառնալով, նստում են բաղերը:

— Ինչպես պայմանավորվել ենք, այստեղ յես քո հրամանատարն եմ, — շնջում է Մաքսիմիչը, հանկարծ դաժան տեսք ընդունելով: — Իսկ քաղաքում դու իմ հրամանատարը կլինես: Թեև դու իմ փոքր բարեկամն ես, բայց տես, վոր կարգապահություն լինի: Հակառակ դեպքում յես իսկուհի դգակդ կդգեմ:

— Լսվ, — դժգոհությամբ պատասխանում է Կոլյան:

Հիմա յուրաքանչյուրի ձեռքին մի-մի ձող կա: Ձողով գննելով ճահճի հատակը, վորսորդները դանդաղ առաջ են շարժվում: Խանգարում է խիտ ուռուտը, բայց նա յեր,

փրկում է ճահճուտից: Ամենափոքր սխալ կատարելիս, վոտքը սուզվում է ծնկից բարձր: Շարունակ հարկավոր է աջ կամ ձախ ծուկ ճամփան, վորպեսզի անցնեն ընկած ծառի բնի վրայով կամ թռչեն մի թփուտից մյուսի վրա: Նեղում է բարձր, մեկ սաժին բարձրություն ունեցող յեղիճը, այրելով յերեսներն ու ձեռքերը: Իսկ այնտեղ, վորտեղ փոքր ինչ չոր է, ամեն ինչ կպչուն կերպով ընդգրկել է դալուկը, վորը ստիպված են կտրտել ձեռքերով: Յե՛վ առաջից և՛ կողքերից, ծառացած հրեշների նման, բարձրանում են լաստենու տակն ու վրա յեղած արմատները: Բոշխը մարմին է կարատում, մարմնահատը հագուստն է պատառոտում: Իսկ վոր գլխավորն է՝ այնտեղ վոչինչ հուսալի չէ, զգուշացիր, վոր վոտքդ փայտի վրան չգնես. նա արտաքինից առողջ է, սակայն ժամանակի ընթացքում ներսը փտել է: Ճահճախտերով ծածկված դեպիները ալեծածանվում է վոտքի տակ, սպառնում է քաշել մածուցիկ ցեխի մեջ, կլանել ամբողջովին՝ վոտքից մինչև գլուխ: Յետևում, այնտեղ, վորտեղից վորսորդներն արդեն անցել են, դեռ յերկար ժամանակ ճըլփում է անհանգիստ յեղած ճահճուտը, փուչիկներ առաջացնելով:

Տղան առաջին անգամն է յեկել այս ճահճային — անտառային խուլ անկյունները: Սարսափելի չէ: Ո՛ւր է տանում իրեն այս ամրակազմ մարդը: Գոնե մի բաղ տեսներ: Վոչինչ: Մեռելային լություն է:

Հանկարծ նրա վոտքի տակ կոտրվեց ծոված թուփը. նա յերկու վոտքով անմիջապես խրվեց ճահճուտի մեջ: Ուզում եր դուրս պրծնել, բայց ավելի խորասուզվեց: Նրա աչքերը մթնեցին, ծառերը շարժվեցին կարծես: Ձեռքերն ու վոտքերը վոչ մի հենարան չուներն: Նա վրդողված գոռաց:

— Մաքսիմիչ, Մաքսիմիչ:

— Կամաց, — դառնալով ճչաց նա բարկացած:

Նա պինդ բռնեց Կոլլայի ձեռքից և դուրս քաշեց, ինչպես բոխիկ մարգից:

Կարծես թքոտ բերանով չալպացրեց ճահճուտը:

— Տես, թե ուր ես քայլում: Սա Մոսկվայի զբոսարանը չէ:

Վորքան հեռանում են, այնքան խորանում է ճահճուտը: Բայց այստեղ անցնելն ավելի հեշտ է. անցնում են կտրտած լաստենիների վրայով, վոր առաջ կարտել է Մաքսիմիչը: Վորսորդների վերջին կայանը մեծ հողաթմբերն են. նրանցից մեկը քառակուսի սաժեսի չափ մի կղզի յե: Նրա յեզրերին բարձրանում են լաստենու ծառեր: Տանջված, բրտնքից ու ջրից թրջված վորսորդները ուրախությամբ են բարձրանում այդ հողակուլտի վրա: Այստեղ շոր է: Կամացուկ փոխում են իրենց շորերը և թաղիքե փտնամաններ հագնում:

Նրանց առաջ տարածվում է յերկարավուն, վոչ այնքան մեծ մի լիճ: Նրա շուրջը լաստենու անտառի բարձր պատ է: Այդ պատը վերևում հյուսված է վորոշ մասերում թուխ գույն ստացած ճյուղերից, իսկ ցածի մասում ծածկված է խիտ ուռուտով, յեղեգնուտով և այլ ճահճային բույսերով: Լճի ջուրը մուգ գույն ունի և վայլում է կանեփի ձեթի նման:

Մարտական պահակետը խիտ հարմար է, այնտեղից, թագնվելով թփերի յետևը, կարելի յե կրակել լճի ուղածդ կողմը:

Լճի յետևում, ծայրից վոչ հեռու, կա միայնակ մի սոճի: Այդ սոճին կարծես թե պահպանում է Սատանի վորջը, իր փշաթաղ բարձր տարածելով լաստենիների վրա:

— Ա՛յ քեզ հրաշք, — շնչում է զարմացած Կոլլան:

— Ի՞նչը, — հարցնում է Մաքսիմիչը:

— Այսպիսի ճահճուտում հանկարծ սոճի:

— Այո, նրա միջոցով յես յերեկ հասկացա, վոր

այստեղ է գտնվում յերամը: Յեվ չեմ սխալվել: Տեսնում ես, ամեն տեղ, ինչպես թռչնանոցում, փետուր ու բմբուլ է թափված թե հողակուլտերի և թե ջրի վրա:

— Այ, թե ի՞նչ:

Մաքսիմիչը խստիվ պատվիրում է.

— Բավական է: Այլևս վոչ մի ձայն չլսվի:

Սպասում են, վատենալով շարժվել, կաշում են գետնից: Աչքերը հառել են դասարկ լճին: Սատանի վորջը լսել է, կարծես սուզված է իր խավար մտքերի մեջ: Ճահճուտը փսփսում է, փուչիկներ բաց թողնելով: Յերբեմն ձուկը, իր արծաթե թեփուկները փայլեցնելով, ծփում է սև ջրի մեջ: Բայց բազերն այստեղ են: Նրանք դիտեն, վոր ինչ վոր մեկը յեկել ու յետ չի գնացել և այժմ ունկընդրում են զգաստ ամենափոքրիկ շարշյունի:

Կոլլային այդ անշարժությունը ձանձրացրել է: Նա ուզում է շրջվել, փոխել իր հոգնած մարմնի դիրքը: Մաքսիմիչը բուռնցք է ցույց տալիս նրան: Տղան ուռեցնում է շրթունքները և հարյուրերորդ անգամ սկսում հեռաբերքովել սպանված վորսով, գննում է թեփերը, վոտքերը, նայելով կտցի մեջը, պոչի սակը:

Մի քիչ հետո ձայներ լսվեցին, յեղեգնի շրջյուն, արմատներն ու խոտերը գննող բազերի կտուցների շրթուկոց: Ավագ վորսորդն ուրախ աչքով է անում, այսինքն թե՛ ավար կուռենանք: Յերկուսն ել բերանները բաց լրսում են, նույն ձևով ել ժպտում են յուր, անհնչյուն, միայն ավ' լի լայն բաց անելով շրթունքները: Դրանից նրանց դեմքերը հիմար են դառնում:

Վերջապես լճի վրա անաղմուկ դուրս է գալիս մի բազ: Նա կանգ է առնում և զգուշ դիտում իր շուրջը:

«Կրակ...»

Նրա ձայնը ցածր է: Ինչպես յերևում է, կյանքի մեծ փորձ ունեցող մայր բազ է:

Մի փոքր լուելով, բազը նորից ե կոնչում: Ինչ վոր հեռու տեղից նրան ձայնակցում ե մյուսը, ապա յերրորդը: Լճի մակերեսն են գալիս մի քանի մայր բազեր: Նրանց թիվը բոպե առ բոպե ավելանում ե: Հիմա նրանք քաշվում են դեպի կենտրոնը, կարծես միտինգի յեն գալիս չորս կողմից: Շուտով արդեն լճի վրա դատարկ տեղ չի մնում, ամբողջ մակերևույթը կենդանացել ե, գորշացել ե թռչուններից: Վորքան են նրանք: Հազար, թե ավելի: Շարունակում են առաջվա նման կոնչալ, ժամանակ առ ժամանակ կարծես ինչ վոր բանի մասին նախազգուշացնելով իրար:

Թաքնված վորսորդները հազիվ են շնչում և արդեն թմբած մարմնի հոգնածությունը չեն զգում: Ցնցվում են մկանները, վառվում են այտերը, գիշատիչ ազահությամբ փայլում են աչքերը:

Բազերը սկսում են լողանար, գեղեցկանալ: Սուզվում են, ծփում, ջրակաթիլներ բարձրացնելով: Մի քանիսը թափահարում են թևերը, կարծես փորձելով նրանց առաձգականությունը: Կոնչում են ավելի ուրախ և հաճախ, կարծես լցված են ինչ վոր աշխույժ տրամադրությամբ: Դա յերկար չի տևում: Ընդհատելով զվարճալի խոսակցությունը, հանկարծ լուռւմ են, նստում հանգիստ, միայն նայում են իրար, գլուխները թափահարելով, կարծես ինչ վոր մի բանի ընդհանուր հավանություն տալով:

Արևը հրաժեշտ ե տալիս անտառին, լուսավորելով միայն ծառերի կատարները: Ցածից խոնավության շունչ ե փչում:

Հանկարծ կոնչում ե մի բազ, կոնչում ե բարձր, կարծես կոչ ե անում մյուսներին: Յեվ իսկույն լարված լուությունը կարծես ճաքում ե, պատռվում: Ողբ լցվում ե զրդյունով և թափահարվող թևերի շչունով: Բարձրանում ե ահագին յերամբ: Բազերը թռան վոչ թե միայն

լճից, այլև նրա յեզրերից, խոտերի և թփերի միջից: Թվում եր, թե Սատանի վորջի վրա փոթորիկ ե բարձրացել:

Կոլյան ցնցվեց, գլուխը պտտեց: Մաքսիմիչը հրեց նրա կողքը:



Վորսորդները, դարանամուտ յեղած  
հազիվ են շնչում . . .

Կարճ ժամանակով լուսթյուն տիրեց: Լճի մեջ մնացած բազերը խողազվեցին, նստած եյին անշարժ, յերկար վզները ձգած, կարծես սպասում եյին հրամանի: Գարձյալ լավեց կռչի ձայնը: Թնդաց նոր յերամը, ձախրելով և պտտվելով գորշ հողմի նման:

Իսկ յերբ լիճը դատարկվեց, Մաքսիմիչը կանգնեց ու ասաց.

— Բոլորը թռան: Մնացել են միայն մի քանի պահակ—բազեր: Հիմա կարելի չե խոսել և աղմկել ցանկացածի չափ: Կոլյան, վոր չափազանց զրգոված էր, հարց ու փորձե անում.

— Ինչո՞ւ համար են մնացել պահակները:

Մաքսիմիչի դեմքը ծածկվում է լայն ժպիտով:

— Կարող ե վաղը մառախուղ լինել: Այդ դեպքում վաղ վերադարձող բազերն ինչպես կարող են գտնել իրենց լիճը: Ահա այստեղ մնացողները ձայն կտան նրանց, այսինքն թե այստեղ յեկեք: Յեղբայրս, թռչուններն ել իրենց կարգ ու կանոնն ունեն: Այսպես եմ կարծում յես: Իսկ յեթե լուրջ ասելու լինենք, սատանան զխոսե, թե ինչո՞ւ չեն մնացել:

— Իա ինչո՞ւ մենք չկրակեցինք: Այնքան հարմար էյինք նստած: Իսկույն կարող էյինք մի-յերկու տամայակ սպանել:

— Վաղը կսպանենք, հարազատս, վաղը:

— Իսկ ո՞ւր թռան բազերը:

— Մարգագետինները, կերակրվելու:

— Իսկ մարգագետինները հեռու չեն:

— Մի քսան վերստ հեռու, գուցե և ավելի:

Տղան դեռ շատ հարցեր ունի, բայց Մաքսիմիչը ժամանակ չունի պատասխանելու: Կացինը վերցրած, նա շորուկների վրայով գնում և դեպի չոր լաստենին, վոր ամբողջ գիշերվա համար վառելիք պատրաստի: Գիշեր ե:

79-56/09-62

Հողակուլտի վրա ձթձթում ե խարուչիը, թեյամանը տաքացնելով: Բոցի լույսից պատուվող մթուձյունը շարժվում ե, շողքերը կարծես վախեցած այս ու այն կողմ են նետվում: Լիճը բոցավառվում ե վոսկե ցուլքերով:

Վորսորդներն ընթրիքը վերջացնում են: Նրանք վորսը պատրաստել էյին վոչ սովորական ձևով. մաքրել էյին, աղ ցանել, և փաթաթելով թաց կտորների մեջ, դրել էյին մոխրի մեջ: Յեվ յերկունսն ել անվերջ գովասանքներով, վոչնչացնում էյին կիսահում միսը:


— Առանձնապես համեղ ե սալամբը,— հիանում ե Կոլյան, ծնոտները յեռանդով աշխատեցնելով:

— Հենց դրա համար ել նրանց կյանքը բանի պետք չե, արցունք ե միայն:

— Յես չեմ հասկանում, թե ինչո՞ւ յե արցունք:

Մաքսիմիչը կրծոտեց վերջին վոսկորը, զցեց ջուրը և հագուստի թևով շրթունքները սրբեց:

— Պետք ե յերեսը խաչակնքել, բայց մոռացել եմ, թե վո՞ր ձեռքով են անում այդ: Հեղափոխությունից դեսը չեմ աղոթել: Այն: Իսկ սալամբների մասին ինքդ դատիք. ինչ կյանք ունին: Յուրաքանչյուր բոպե դողա ու շուրջը նայիր վոր բազելի ձանկը շընկնես: Իսկ ձմեռը: Չե վոր խեղճը հանդիստ քնելու տեղ չունի: Սալամբը սիրում ե սառնամանիքի ժամանակ թաղվել ձյունի մեջ: Իսկ աղվեսը հենց դրան ե սպասում: Նրա վոսկորները ձարպիկ անպիտանի ատամների տակ կճոճոան: Յեթե յեղևնուտի մեջ պահվի, կզաքիսը աղվեսից հետ չի մնա: Իսկ ամենամեծ չարիքը մարդն ե: Սալամբը միշտ պետք ե պատրաստ լինի: Հենց վոր մի փոքր շըշյունս լի, պետք ե ըստուզի՝ ձեռքին հրացանը բռնած մարդ հո չի գալիս: Իացի այդ տարրինակ բնավորություն ունի, մենակ մնալ չի սիրում: Մի ուրիշի յերգը լսելով, վազում ե ընկերոջ մոտ գետնի վրայով, կամ թռչում ե ու ձայն տալիս: Իսկ այդ ժամանակ պարզվում ե, վոր դա իսկական պրոփո-



կացիա յե. նրան գրավելու համար, վորսորդը նվագում եւ Ռւրեմն մահ: Առավոտյան տեսար ինչպես եր: Յես կարծում եմ, վոր աշխարհիս բոլոր սալամբները պետք ե վուչընչանան, այլ կերպ չի կարող լինել: Բոլորն ել նրանց չափազանց շատ են սիրում:

— Թեյամանն աղմկեց: Մաքսիմիչն զգուշությամբ թեյամանը իջեցրեց և մեջը թեյ գցեց:

Տղան մտազբաղ եր, ինչ վոր անհարմարությունն եր զգում:

— Բա ինչո՞ւ յենք սպանում սալամբներին,—հարցրեց նա հանդիմանական ձայնով:

— Մենք, բարեկամս, դրանում մեղավոր չենք: Իսկ դու ասա, ինչո՞ւ սալամբի միսն այնքան համեղ ե: Ռւրեմն, այստեղ մեղքն աստծունն ե, կամ ձեր կոմիտրիտական լեզվով ասած՝ բնությունն ե մեղավոր: Յեթե նա փախող լի նման հոտած լիներ, ո՞վ ձեռք կտար:

— Ճիշտ ե, Մաքսիմիչ, մենք այստեղ մեղք չունենք,— ուրախացավ յերիտասարդ վորսորդը:

Լճի մյուս կողմում, հեռվում կռնչում ե մի բաղ: Կոլյան բերանն այրելով խմում ե թեյը և նայում հարևան հողաթմբերին, վորտեղ ինչ վոր մեկը խշխշացնում եր չոր տերևները: Մաքսիմիչը, մի զույգ մեծ գավաթ դատարկելուց հետո, ինքնագոհությամբ շոյում ե իր փորը:

— Ամբողջ գիշերվա համար տաքությունն հավաքեցի: Հետո, սեփական արտադրության գլանակ ծխելով, պատմում ե.

— Կորած տեղ ե սա: Այստեղ ընկնողը՝ թե անասուն, թե մարդ, յեթե անփորձ ե, կկործանվի, վորովհետև ճահճուտ ե: Տեղ-տեղ ձողը չի հասնում հատակին: Մատանի վորջից նույնիսկ վորսորդներն ել են վախենում: Նախանցյալ տարի այստեղ մեկը կորավ:

Կոլյան գլուխը թափահարեց:

— Ի՞նչպես կորավ:

— Շատ պարզ: Յեկավ այստեղ, իսկ դուրս գալ չըկարողացավ, խրվեց: Հենց այս ժամանակ եր, աշնանը: Իսկ գեկտեմբերին, յերբ արդեն ամեն ինչ սառել եր, մի ուրիշ վորսորդ գտավ նրան: Գնում ե յեղել կզաքիսի հետքերով: Տեսնում ե ձյունի միջից մի մարդու գլուխ ե ցցված, ամբողջովին կրծոտված: Ատամները բաց, աչքերի փոխարեն՝ փոսեր: Ել յետ չնայելով, վորսորդը տուն ե փախել: Հետո մարդիկ են յեկել, մեռելին հանել: Մարմինը վնասված չեր. ցուրտ ժամանակ եր, դեռ չեր նեխվել:

Կոլյան այժմ գիտե, թե ի՞նչ ե Մատանի վորջը: Նա նույնիսկ մասամբ իր վրա փորձել ե նրա ազդեցությունը: Յերբտասարդի յերեվակալության մեջ պատկերանում ե այս վայրի և ճահճուտային խորքերում միայնակ վորսորդի կործանման մտալ պատկերը: Նա ցնցվում ե ահից:

Շինծու անտարբերությամբ նա դիմում ե Մաքսիմիչին.

— Այդ ինչպե՞ս ե, վոր չի կարողացել դուրս գալ: Դեռ ինքն ել վորսորդ ե:

— Տեսնում եմ, վոր դու շատ քաջ ես, իսկ յեթե քեզ մենակ թողնեմ, ի՞նչ կանես: Փորձիր դուրս գալ:

Կոլյան հարցասիրաբար նայում եր իր բարեկամին:

— Այդպիսի բան դու չես անի:

Մաքսիմիչը ծիծաղում ե:

Պարուկը հանգչելու վրա յե: Կուշտ ուտելուց և թեյ խմելուց հետո, ծուլանում են ձեռք մեկնել և կրակի վրա ցախ դնել: Առանց կրակի յել տաք ե: Լուռ են: Կոլյան, լաստենիների միջով նայում ե յերկնքին: Ճյուղերի ժանեկային գործվածքի մեջ պսպղում են աստղերը, կարծես իրենք ծառերը ծաղկել են վոսկե պեպեհների պես: Բայց յեթե ցած ես նայում, անլույս խավարի մեջ, սարսափն ե ազգում: Յերբեմն ինչ վոր մի բան կկլում ե ջրի մեջ:

Ինչ վոր մի տեղ կորած յերեխայի նման լայիս է բուն։  
Յեվ նորից չարագուշակ լուծյուն։ Նույնրակ լավում է,  
Թե ինչպես է քնած Սատանի վորջը. խորքից, ինչպես



Այդ ինչպես է, վոր չի կարողացել դուրս գալ.  
դեռ ինքն էլ վորսորդ է.

խմորը տաշտում, հառաչում է ճահճուտը, ճահճի հոտ ար-  
ձակելով։

Մաքսիմիչը ծուլությամբ շարունակում է։

— Ասում են, հին ժամանակ այստեղ մի քահանա յե-  
խեղդվել։ Այն ժամանակից այս վայրը Սատանի վորջ են  
կոչել։ Քահանան թե վորս անել էր սիրում և թե՛ խմել։  
Մեկ որ մտածել է վորսի գալ այստեղ։ Հետը վերցրել է  
անտառապահին։ Նա նախազգուշացնում է յեղել, վոր  
ճահճուտը չմտնի, բայց քահանան չի լսել։ Հետո անտա-  
ռապահը յերկար ժամանակ կանչել է նրան, բայց պա-  
տասխան չի ստացել։ Ուրեմն յեղդվել է։ Ասում են մինչև  
այժմ ել կենդանի յե, միայն ամբողջովին ծածկվել է  
տիղմով։

— Ո՛վ,—հարցրեց կույան։

— Քահանան։

Տղան անվստահորեն նայում է հասակավոր վորսոր-  
դին։

— Ինչպես կարող է ջրահեղձը կենդանի լինել։

Մաքսիմիչը մռայլորեն բացատրում է.

— Վորովհետև քահանա յե, վոչ թե մեզ նման մարդ-  
նա չպետք է վորսի գնար, իսկ նա գնացել է։ Դրա հա-  
մար ել այժմ տանջվում է իբրև պատիժ։ Հասկացանք։ Ա-  
սում են, վոր զիշերները, ուղիղ ժամի տասերկուսին,  
սատանան բռնում է նրա բաշից ու քաշում է լճի վրա-  
յով։ Դժբախտաբար քահանան խմած լինելով, մոռացել է  
խաչը վերցնել։ Յեվ վորպեսզի չկարողանա աղոթք անել,  
սատանան նրա լեզուն պոկել է։ Հիմա նորին արժանա-  
պատվությունը միայն բառաչել է կարողանում, ինչպես  
յերկար սոված մնալուց հետո, իսկ սատանայի համար  
այդ բանը ծիծաղելի յե։ Այդպես ել սատանան ծաղրում  
է նրան։

— Ելի դուրս տուր,—քննադատորեն նկատում է.

Կոլյան, զգալով սակայն, վոր մեջքով յառսուռ ե անցնում:—Սյրպես յերբեք չի լինում:

Մաքսիմիչը հառաչում ե:

— Չգիտեմ, լինում ե, թե վոչ: Մարդիկ ասում են: Իսկ յես ինչպես գնել եմ, այնպես ել վաճառում եմ:

Տարորինակ ե. Մոսկվայում տղան յերբեք սատանաների մասին չեր մտածում: Թե դպրոցում, թե հայրն ու մայրը ասում են, վոր սատանաներին, ինչպես և աստծուն, քահանաներն են հորինել, ժողովրդին վախեցնելու համար: Իսկ այստեղ, չգիտե թե ինչու, յերկուողալի յե: Ահում ե անհասկանալի տագնապը, լարվում են շղերը:

Խարույկը մարել եր, միայն կրակն եր մարմրում: Կոլյան, վոտի կանգնելով, յերկչոտ նայում ե լճին և ասողերով ծածկված սև անդունդից բացի, վոչինչ չե տեսնում: Շուրջը խոնավ և անթամփանցելի խավարն ե: Բայց թվում ե, թե դիմազուրկ մի վոմն թագնվել ե ճահճի մեջ և սպասում ե...

Հանկարծ շուրը ծփաց, կարծեք մարդ շրմփաց մեջը: Տղան յերկյուղի մութ ալիքով կլանված, յետ թռավ, նըստեց, կծկվեց: Ինչ վոր ահռելի ճնշող բան եր կախվել նրա վրա: Ահա այս րոպեյին նա կլսի յերկու հրեշների թըրպըրտոցը. մեկը, վոր պատած ե տիղմով, ուժգին կբառաչի, իսկ մյուսը, յեղջերավորը ու փրչոտը, պինդ կխրխնջա, կծիծաղի...

Չգուշությամբ, ինչպես գող, նա խեթ-խեթ նայեց Մաքսիմիչին: Հեզնական ժպիտը մի փոսիկով նրա կոթ գեմբը բաժանել եր յերկու մասի: Տղան անհարմար զգաց:

— Գիտես ինչ, Մաքսիմիչ,—ասաց կոլյան մի ուրիշ ձայնով:

— Ինչ:

— Արի խարույկի վրա չելի ցախ ավելացնենք, թե չե ինչ վոր ցուրտ ե:

— Սյր ել բան ե:

Մաքսիմիչը կրակը փչեց: Իսկ յերբ խարույկն ուրախ բոցավառվեց, նա ավելացրեց:

— Սատանաների ու քահանայի մասին մարդիկ իդուր են խոսում: Յես այս հողակույտի վրա քանի անգամ գիշերել եմ, վոչինչ չեմ լսել:

— Յես ել կարծում եմ, վոր իդուր ե,—ուրախությամբ համաձայնեց յերիտասարդ վորսորդը:— Հիմարություն ե, ուրիշ վոչինչ:

Մաքսիմիչը դիմում ե կոլյային.

— Սյ թե ինչ, բարեկամս. լավ կլիներ Մոսկվայում ինձ համար թույն ճարելիք: Մտրիխնին ե կոչվում:

— Ինչի համար:

— Գալլեր ու աղվեսներ վոչնչացնելու համար: Շատ են բազմացել այդ գազանները: Մտրիխնին վոր ունենամ, խրճիթ կսարքեմ ինձ համար, թե չե յեղածը բոլորովին փլվում ե:

— Կճարեմ, Մաքսիմիչ, անպայման կճարեմ, Մոսկվա հասնելուն պես կգնամ Մարիա Փյոդորովնայի մոտ: Բըժիշկը յերևի ստրիխնին կունենա: Իսկ արջերին չի կարելի ստրիխնինով սպանել:

— Ձե, արջը չի հրապուրվում. նա միայն այն կենդանիներին ե ուտում, վորոնց ինքն ե սպանում: Խորամանկ ե անպիտանը:

Մի քիչ լռելուց հետո, Մաքսիմիչը պատմում ե.

— Չվարձալի կենդանի յե արջը: Մեր մեղվանոցում մի դեպք ե պատահել: Սյր մեղվանոցն անտառումն եր գտնվում: Մի անգամ մեղվաբույժը զարթնում ե: Լուսաբաց եր, համարյա ամեն ինչ յերևում եր: Նայում ե լուսամուտից և ինչ, մեղվանոցում կատակերգութուն ե կատարվում: Արջն արդեն յերկու փեթակի հետ հաշիվ ե

տեսել: Յեկ հեռանում ե: Վոչ: Նրան խողալ ե հարկավոր: Իսկ արջը չերիտասարդ չեր, 12 փուլ կլիներ...

— Իսկ ինչպես եր նա խողում, — անհամբերությամբ հարցրեց Կոլյան:

— Խեղբ կարել եր. կանգնել եր յետևի թաթերի վրա, առջևի թաթերով բռնում եր ծառի հաստ ճուղից, յետևի վոտները կուչ ածում և սկսում ե ճոճվել: Զվարճանում եր: Ինքնագոհությամբ խոթխոթացնում եր: Իսկ այն մեղվաբույժը ուժեղ տղամարդ եր, իսկ բնավորությամբ՝ վառու: Փոքրիկ գայրույթից աչքերը լցվում եին արյունով, և պատրաստ եր սատանայի դեմ կռվի դուրս գալ: Իսկ այս դեպքում առավել ևս գայրացավ. վերջրեց լծակը ու կամաց, աննկատելի կերպով գնաց արջի կողմը: Հենց վոր արջն սկսեց ճոճել, մեղվաբույժն աղաղակեց ու ամբողջ ուժով խփեց վողնաշարին: Արջը թրբմի՛ գետնի վրա: Ու սկսեց թավալվել մեղվանոցում. փեթակների կեսը վայր գցեց: Այնպես եր վրոնում, վոր անտառը դողում եր, արյունալուծ եր սկսվել, վոնց վոր հրշեջ խողովակեց: Մեղվաբույժն ուղքի յեկավ վախեցավ: Ահա, մտածում ե, — արջը վրաս կհարձակվի: Զվարթ վոտները ծալվեցին՝ նստեց, ու ինքն ել սկսեց գոռալ:

— Ոգնեցե՞ք:

Սատանի վորջում տարածվեց տղայի ծիծաղը:

— Իսկ հետո ինչ, — հարցրեց Կոլյան:

— Արջը սատկեց, ուրիշ վոչինչ: Տեղն ու տեղը սատկեց: Նրա ուժը շատ ե, ինչքան ուզես, բայց սիրաբ թուլլ ե: Վախին չզիմացավ:

— Իսկ մեղվաբույժը:

— Այդ տեսակետից մարդն ավելի դիմացկուն ե: Լավացավ:

Նորից Կոլյան ուրախ քրքջաց:

— Ինչ հետաքրքրական ե: Այ թե ճոճվեց արջը հա: Ելի մի բան պատմիր, Մաքսիմիչ:

Յերկու բարեկամ, կրակի մոտ նստած, շարունակում են զրուցել: Ասենք, ավելի շատ հասակավոր վորսորդն եր պատմում, իսկ չերիտասարդը միայն անկուշտ ազահությամբ լսում եր նրան: Կոլյայի համար այժմ Մաքսիմիչից սիրելի մարդ չկար ոչխարհում: Նա, այդ մարդը, բոլոր վերջերից հետաքրքրական եր:

— Ռուսաստանի վոր մասումն ել վոր լինեմ, անպայման պետք ե վորսի գնամ: Մի անգամ ապրում եյի լեհաստանում: Դա պատերազմի ժամանակ եր: Մտածեցի, հրացան առած գնամ, ման գամ: Վայրը մերթ անտառ եր, մերթ դաշտ: Մտենում եմ մի ձորի. տեսնեմ՝ թփի յետևից վայրի այժ ե բարձրանում: Նշան բռնեցի, թրմխկ, իսկույն գլորվեց: Ուրախացա: Մոտեցա և ինչ եմ տեսնում. այժը յերկու ուլիկ ունի, բոլորովին մատղաշ, սիրունիկ, վոտները յերկար ու բարակ մոմի նման: Աչքերը խոշոր ու թուլս: Այնպես խղճալի եյին նայում ինձ, կարծես իսկույն արցունք պիտի թափեն. մեռած մորից ել չեն հեռանում. դեռ հիմար են, վտանգը չեն զգում. սիրտս ճովեց: Այժն առա ուսիս և հայդս տուն: Չազերն ել հեռեցին ինձ: Գալիս են ու մկկում, կարծես լալիս են: Մորը վոր ցած եմ դնում, սեղմվում են նրան, գլուխները վորին են դնում... նայել չեմ կարողանում, արցունքը խեղդում ե: Իսկ սպանել — միթե ձեռքս կբարձրանար նրանց վրա: Շատ դժբախտ ուլիկներ եյին: Կը հավատամս ամբողջ ճանապարհին շատ հուզված եյի. կարծես հարազատ յերեխաներս եյին վազում յետևիցս: Այդ պիտով բե ի նրանց տուն...:

Կոլյան արագ թարթում եր իր խոնավ աչքերը. շրջվեց գեպի լճի կողմը. նայում եր գետի սև մակերևույթին ու վոչինչ չեր տեսնում: Ինչ վոր մի բան կոկորդը խեղդում եր. և միայն մի քանի բույս անցնելուց հետո, դողդոջուն ձայնով հարցրեց:

— Իսկ ինչ յեղան ուղիկները:

— Վաշտապետին նվիրեցի: Մոսկվա տարան: Յերբտասարդ վորսորդը պառկեց մեջքի վրա և դեռ յերկար ժամանակ պատմութիւններ եր լսում: Հետո ծանրացած կոպերն իջան: Փորձեց բարձրացնել, չկարողացավ: Միայն դգաց, վոր կարճես ինքը հալչում ե, ինչպես ամպիկը տաք արևից:

Գիշերը գունատվում եր, հետզհետե հանգչում ելին աստղերը: Ծառերի ուրվագծերն ավելի պարզվում ելին:

— Եյ, վեր կաց: Կսում ես, թե վոչ,—արթնացնում եր իր բարեկամին Մաքսիմիչը:

Կոլյան հանկարծ սկսում ե հեծկտալ:

— Պետք չե այժին սպանել, պետք չե...

Նստելուց հետո յերկար ժամանակ տրորում ե աչքերը, չի կարողանում ուշքի գալ:

Մաքսիմիչը վերցնում ե ջրով լիքը թեյամանը և համոզում:

— Յերեսդ ջրով շփի՛ր, յեղբայր, հիմա պիտի սկսենք կրակել:

— Կրակել:

Կոլյան արագ վեր թռավ և արագ լվացվեց:

Սատանի վորջը թեթե մառախուղ ե պատել: Սառն ուղում հեռվից պարզ լսվում եր բազի կոնչոցը: Զով եր: Մըսում են: Վորսորդները հանում են պայուսակներէց պահեստի փամփուշտները:

— Ապա լսիր,—հանկարծ լարեց լսողութիւնը Մաքսիմիչը:

Լավեց թևերի շարշուռն: Վերադառնում ելին գիշերային խնձոյքից ավելի անհանգիստ բաղերը: Տասը բազից բազկացած մի խումբ եր գա: Կտրուկ շրջադարձ և ընկնում են լճի վրա ուղիղ վորսորդների առաջ: Թռչունները ձուլվում են գորշ մթության հետ, համարյա չեն

յերևում, միայն մոտավոր նշան ե հնարավոր բռնել: Հողակույտից յերկար կրակչա լեզու փայլատակեց և գոռոցով պայթեցրեց նախառավոտյան լուսթյունը:

Նրանց ականջները զրնգաց: Զրում թփրտում ե բազը: Կոլյան դեռ չեր դատարկել հրացանը, բայց ուրախ ճչում եր:

— Պատրաստ ե:

Մի քանի բոպեցից դարձյալ մի յերամ ե իջնում:

Նորից կրակոց, և նորից թփրտում են ջրի վրա մեռնող վորսի թևերը:

— Այդ յես սպանեցի,—զրգոված գոչում ե Կոլյան:

— Աչքդ շատ լավ ե աշխատում,—պատասխանում ե Մաքսիմիչը:—Միայն, այ թե ինչ քանի վոր դու հողակույտի ձախ կողմումս ես նստած, ձախ կողմից յեկողներին կրակիր, իսկ յես աջակողմյաններին կկրակեմ: Այլպես մենք կարող ենք մի բազին յերկու գնդակ խփել:

Վորքան մոտենում եր լուսաբացը, աչքան շատանում եր յեկող բազերի քանակը: Իջնում են լճի վրա յերեք-յերեք, չորս-չորս հատ, յերբեմն և տասը միանգամից: Հիմա արդեն նրանց կարելի յե տեսնել ջրի վրա: Վորսորդները հազիվ են կարողանում լցնել հրացանները: Կրակում են համազարկով նստած բազերին, մի քանիսը սկսում են թփրտալ ջրում, ջրակաթիլներ բարձրացնելով: Մնացածները սարսափահար վեր են թռչում, շտապ թափահարում են թևերը, ձգում յերկար վզերը: Բարձրանում են համարյա ուղղաձիգ, միայն թե շուտով բարձրանան անտառի վրա և փախչեն, կտրելով ողն ուղիղ գծով, հեռանան սարսափելի վորոտից: Սակայն նորից յերկու կրակոց ե լսվում և մահը խլում ե յերամից դարձյալ մի գուլգ բազ: Յերևում ե, թե ինչպես ե վայր իջնում մեկը, անհեթեթաբար գլխիկոնծի տալով, իսկ նրա յետևից, քրքրված փաթեթի նման ընկնում ե մյուսը:

— Մաքսիմիչ, տեսա՞ր, թե վոնց վեր գցեցի:

— Հավանութիւն եւ տալիս:

Կոյյան տաքացել է: Տաս տարեկան հասակից նա հրացան է բռնում, բայց այսպիսի վորսի առաջին անգամն է դուրս յեկել: Հրացանի փողը տաքացել է, ինքը, սողան նուշնպես տաքացել է և պատրաստ է հազուստը հանելու:

Բազերի վողջ վողբերգութիւնը կայանում է նրանում, վոր կերակրվելու գնալիս մեծ յերամներով են հեռանում, համարյա բոլորը միասին, իսկ վերադառնում են մաս-մաս, մի քանի հատ: Վորսորդները այդ իմանալով կոտորած էյին կազմակերպել: Արդեն հալվել եր գիշերը, ուրախ կարմրել էյին ծառերի գլուխները, իսկ հրացանների վորտը դեռ շարունակվում եր: Անտառը գորգալի արձագանքում եր: Սատանի վորջի վրա վառողի ծխի ամպ է կանգնած: Այն ժամանակ, յերը մայր բազեից վոմանք կրակոցներից խլացած բարձրանում են լճից, մյուսները, չկասկածելով սարսափելի դարանակալության մասին, իջնում են ջրի վրա: Ողում, լճի վերևը, կարծես ճախրում է թռչունների յերամը: Կարելի չէ անվրեպ սպանել նրանց, քնորովի:

Արևը ծագելուց հետո յեկող բազերի թիվը պակասեց: Մաքսիմիչը հայտարարեց.

— Յես միաջն յերկու փամփուշտ ունեմ:

— Յես ել արդեն վերջիններն եմ բանեցնում:

— Ուրեմն վերջացնելու ժամանակն է: Թողնենք աման համար:

Նախաճաշեցին:


Մաքսիմիչը վերցրեց կացինը, շուրջը նայեց:

— Հարկավոր է վորսը հավաքել, դեռ շատ գործ ունենք:

Նա իջնում է հողակույտից և, մեծ պտույտ անելով, մոտենում է լճին, մյուս ծալրից: Այնտեղ, փոքր ծոցի

մաս ջրի մակերևույթը մարտը է, խոտ չկա: Յերկար ժամանակ լսվում է կացնի ձայնը:

Լճի վերևը, ճախրելով ու սավառնելով բազներ էյին



Յերկար ձողը ձեռքին նա կանգնած եր լաստի վրա... անցնում: Նրանք ազահաբար նայում էյին սպանված վորսին, վախենալով խորշում աշխատող վորսորդից: Նրան-

ցից միայն մեկը համարձակվեց ցած իջնել: Կոլյան բարձրացրեց հրացանը: Իսկ յերս կրակոց լսվեց, բազեն, կարծես զիպչելով մի անտեսանալի արդեւքի, ջարդված, բրբրված, անմտորեն սլտովեց ոգոււմ և ընկավ թփերի մեջ:

— Մեկը պատրաստ ե,— զմայլված գոչեց յերիտասարդ վորսորդը:

— Ո՛վ,— հարցրեց Մաքսիմիչը:

— Բազե:

— Այդ անիրաւիները, կարծես վարժեցրած լինեն, պտույտ են գալիս այստեղ, ուզում են բազ գողանալ:

Մի քիչ հետո Կոլյան տեսավ լճի վրա լող տվող վորսորդին: Յերկար ձողը ձեռքին նա կանգնած եր լաստի վրա, վտաբորիկ, առավոտյան արևով լուսավորված: Վորսը շատ եր, և Մաքսիմիչը, հավաքելով, խենթի նման հրահրում եր: Հետո ուղղվում եր դեպի հողակույարը, վորտեղից կրակել էին: (Լաստով շատ մոտենալն անհնարին ե, քանի վոր մարմնահատը խիտ կերպով ծածկել ե ջրի մակերևույթը և խանգարում ե): Նա կանգ եր առնում մոտ յերեք սաժեն հեռավորության վրա և բազերը գցում եր Կոլյային, իսկ նա ուրախանալով հաշվում և հավաքում եր: Մանրութունից ազատվելով, լաստը նորից գնում ե բեռ հավաքելու:

— Մաքսիմիչ, ութսուն լոթ բազ ենք սղանել,— բարձրաձայն հայտնում ե Կոլյան, վերցնելով վերջին բազերը:

— Հա, լավ ենք ջարդ տվել: Առանց ձիու յուր չենք գնա: Միայն թե ճահճից դուրս տանենք:

Լաստը պահվում ե նույն խորշում, վորտեղից լեկել եր: Լսվում ե թփերի շարշուռը: Մաքսիմիչը վերադառնում ե: Շրջվելով վտանգավոր վայրերից նա ծիծաղում ե ու աղմկում: Մի ձեռքով բռնել ե կացինը, իսկ մյուսով մի զույգ բազ:

— Տեսնո՞ր, դարձյալ գտա:

— Վորտե՞ղ:

— Թփերում:

Մինչև հողակույտը յեղած տարածությունը կրճատելու նպատակով, վորսորդը վորոշում ե ավելի ուղիղ ճանապարհով դնալ: Նրա առաջ, խոտի վրա ընկած ե վերտաժ, բորբոսով ծածկված մի ձող: Նա փորձում ե վտաքով հաստ կողմից ամուր ե: Քայլում ե ձողի վրայով, լարախաղացի նման հավասարակշռություն պահպանելով, և ուրախ սուլում ե:

Հանկարծ նրա վտաքի տակ ձողը չրթչրթում ե: Մաքսիմիչը մի բուպե իրեն կորցնում ե և աններելի սխալ ե կատարում. յետ դառնալու փոխարեն, նա իրեն ձգում ե գեպի առաջ, յորուտի կողմը: Ծիշտ ե, նա կարողանում ե թփերից բռնվել, բայց յերկու վտոն ել խրվում են: Թրփուտն անհուսալի չե գտնվում և վորսորդի ծանրությունից սկսում ե հետզհետե խորասուզվել: Մինչև հողակույտը մոտ տաս քայլ տարածություն եր մնում: Անյելանելի գլորություն ստեղծվեց:

Կոլյան լսեց շան հաջոցի նման ձայն: Իսկ յերբ տեսավ ահից լախացած աչքերը, հասկացավ, վոր ինչ վոր սարսափելի բան ե պատահել: Կանգնել եր, բերանը բացած, թմրած, ծնկները դողդողում եին:

Սթափվելով, Մաքսիմիչը իսկույն մտածեց, վոր առաջին հերթին հարկավոր ե կացինը հանձնել տղային: Դրանից հետո միայն նրանից ոգնություն հնարավոր կլինեք ստանալ: Այ ձեռքը յետ գցելով վորսորդը նշան բռնեց:

— Զգուշացի՛ր:

Կոլյան, սթափվելով, պահվեց ծառի յետևը:

Կացինն ընկավ ուղիղ հողակույտի վրա:

— Լաստենին կտրի՛ր:

— Վո՞րը:

— Մայրի՛նը, վորն ինձնից մոտ ե:

— Այն:

— Ա՛յո:

Տղան կացինը խրեց ծառի բնի մեջ:

Հաստենու գլուխը շարժվեց:

— Սպասիր, սատանան տանի,— հանկարծ գոչեց Մաքսիմիչը,— Այդ ինչ էս անում: Իմ կողմից կտրիր վոր գեպի ինձ ընկնի լաստենին: Իարձյալ այ թե ինչ, վերցրու գոտիս և քեզ կապիր մյուս ծառից: Թե չե հողակուլտից կընկնես, այն ժամանակ յերկուսս ել կորած ենք:

Հաստենին հողակուլտի ուղիղ ծայրին է: Ծառը կրտրելու համար ստիպված եր կախ ընկնել ճահճուտի վրա:

Մաքսիմիչին պահուած էլին կողքի վրա ընկած թփերը: Նրանք վոր չլինելին, նա վաղուց անցած կլիներ ճահճուտի խաբուսիկ գորշ-կանաչ մակերևույթի տակ: Իսկ այժմ նա մինչև գոտիատեղն եր խրվել: Բայց նա գգոււմ եր թե ինչպես ճահճուտը շարունակում եր կլանել իրեն, գանդաղ, կարծես հլճվելով վորսորդի տանջանքներից:

Նրա շուրջը չըմբոււմ եր սե հեղուկը, ուռչում ու ճարճքում են բշտկները: Իսկ նրան թվում է թե մի անհայտ մարդ մրսեցրած ու լցված քթածակերով շնչում է խորքից փտած հոտ արձակելով: Վտանքի վրայով, ցածից դեպի վեր, ցուրտ է բարձրանում ու շարժում գլխի մաղերը: Հուռ ու անտարբեր կանգնած են ծառերը: Միայն ցնցվում է հողակուլտի վոսյի լաստենին, այն լաստենին, վորի մոտ կացինը թափահարելով շտապ աշխատում է կապուլտ շապկավոր աղան: Վորսու գլխով թուլլ հուլսով նայում եր նրան: Ծառը քիչ թեքվել եր դեպի նրա կողմը և պետք է ընկներ իրանից մատ մի սաժեն հեռավորութան վրա: Իսկ յեթե ավելի սոտ ընկնի: Նա սարսափով յերևակայում եր, թե ինչպես կխփեն գանդին հաստ ճյուղերը և ավելի կխրեն իրեն Սատանայի վորջի գարշահոտ խորքերը:

Նա խուլոտ ձայնով դիմում է ընկերոջը:

— Սպասիր, կուլտ:

Տղան կանգ առավ կարմրած, քրտնքից թրջված:

— Ի՞նչ է:

— Յեթե յես մեռնեմ, Սատանայի վորջից դուրս կգտտ նույն ճանապարհով, վորով յեկել ենք այստեղ: Ուրիշ ճանապարհ չկա: Միայն նայիր մեր հետքերին, վոր չմոլորվես:

Կուլտան ձեռքերը թափահարեց, լացակամած գոչեց.


— Ձե, չե, Մաքսիմիչ, այդ չի պատահի. յես քեզ կփրկեմ...

Յերբեմն թռչում գալիս էլին բազերը և վախվխելով պտտվում էլին լճի վերևը, վորտեղ առավոտյան պարզ արշալույսին այնքան անսպասելի կերպով վորոտ ու կայծակ տեղի ունեցավ: Իսկ կացնի ձայնը լսելով նորից հեռանում էլին ինչ վոր տեղ:

Շոգ է, կարծես տաքացրած բաղնիք լինի: Կուլտայի շապիկը թաց է, քամել կտրելի յե, իսկ նա անդադար շարունակում է կտրել: Հաստենին հաստ չեր, բայց վորովհետև Կուլտան աշխատանքի սովոր չեր, գործը դանդաղ եր առաջ գնում:

Հոգնած, ինչպես յերիտասարդ քուռակը ուժից վեր վազելուց, նա կանգ առավ, վոր շունչ քաշի: Չորացած կոկորդը խեղդում եր, աչքերը մառախուղ եր պատում, քրտնած աղակուռ նման: Բայց նայում է Մաքսիմիչին, վորը շարունակում է խրվել, և նորից սկսում է աշխատանքը: Թռչում են թարմ տաշեղները: Կտրել է բնի կենից ավելին, իսկ լաստենին դեռ չի ընկնում: Գլխում կրցկտուր մտքեր են անցնում: Յեվ խղճում է կործանվող ընկերոջը, և սարսափում է իր վիճակից: Ի՞նչպես է դուրս գալու այստեղից առանց փորձված վորսորդի: Այլևս Մոսկվան չի տեսնելու: Կնստի այս հողակուլտին, դերու նրման, և այնքան լաց կլինի, մինչև վոր մեռնի: Իսկ հայրն

ու մայրը կապասն իրեն, բայց այլևս յերբեք չեն տեսնի:  
Քիչ եր մնացել, վոր լաստենին ընկնի: Բայց Կոլյան  
այլևս չէր կարողանում կտրել, խեղդվում էր, կարծես  
չգը պակաս էր: Անողնական հենվել էր մի այլ ծառի:  
Կուրծքն արագորեն բարձրանում էր, իսկ ներսում, զըն-



Կտրի՛ր, շուտ կտրի՛ր...

դակահար թուշունի նման բարախում էր սիրտը: Ձեռները  
գոցում էյին: Ականջների մեջ ե մտնում մի խուլուտ ձայն,  
խառնելով ուղեղը:

— Կտրի՛ր, շուտ կտրի՛ր:

Ճահճուտն սկսել էր խեղդել Մաքսիմիչին, մակերև-  
վույթի վրա յերևում էյին միայն գլուխն ու ուսերը: Խո-  
տի միջից յերևում է սարսափելի դեմքը, բաց ատամները,  
կապտած շրթունքները: Աչքերի սպիտակուցները հիվան-  
դագին վոլորվում էյին: Ծուրջն ամեն ինչ բոսոր գույն  
էր ստանում, ինչպես գիշերային հրդեհի ժամանակ: Ան-  
տառի վերևում արևն սկսեց պարել:

— Կոլյա:

Տղան ցնցվեց, կարծես քնից արթնացած, և նորից  
հողնածուխյունը հաղթահարելով շարժեց կացինը:

Լաստենին ճրթճրթում էր և աղմուկով վաչը ընկավ,  
կոտրատելով իր և ուրիշ ծառերի ճյուղերը:

Ստանալի վորջը տխրագին տնքաց:

— Ծուտ, այստեղ արի...

Կոլյան անվախ վազեց ընկերոջ մոտ: Գոտին ձեռ-  
քին բռնած, ճահճուտի մեջ ընկնելու վտանգի տակ, նա  
համարյա վազելով անցավ ծառի բնի վրայով ու կանգ-  
նեց Մաքսիմիչի դիմացը: Վորսորդը ծածկված էր ծառի  
ճյուղերի ծայրերով, վորից նա կարողացել էր բռնվել:  
Ճանդատված յերեսը արյունլիկ էր յեղել: Նա աշխատում  
էր ձգվել դեպի ծառի բունը, բայց ճահճուտը պինդ բռ-  
նել էր նրան, իսկ ծառի բեկուն ճյուղերը կոտրատվում  
էյին:

Տղան արդեն վախ չէր զգում: Ուղեղը պարզությամբ  
էր աշխատում: Յեղ կրծքում միայն մի զգացում էր բոր-  
բորվում՝ շուտով ոգնել ավագ ընկերոջը: Նա գցեց նրան  
գոտու մի ծալքը, իսկ մյուսից ինքը բռնեց:

— Մաքսիմիչ, բռնի՛ր, պինդ բռնի՛ր:

Կատարի պայքարն սկսվեց: Տղան, հենվելով ծառի  
բնին, քաշում էր վորսորդին դեպի իրեն, իսկ ճահճուար  
նրան բաց չէր թողնում: Փոքր մարդու մարմինը լաստե-  
նու վրա ավելի շատ թեքվեց, լարվեց, լցվեց արյունով:  
Միայն թե մեջքը չճաքի: Վերջապես Մաքսիմիչին հաջող-  
վեց ավելի հաստ ու հուսալի ճյուղից բռնելը: Չզվելով,  
նա խիստ լարումից շնչասպառ էր լինում: Դողացող ձեռ-  
քերի մաշկի տակ լարերի նման ձգվել էին ջղերը: Մի  
քանի ճիգ ևս... Ահա արդեն ազատվել է կուրծքը, գան-  
գաղ դուրս է գալիս կպչուն ցեխից: Կոյան ճյուղերի  
վրայով մտտեցավ Մաքսիմիչին և գոտին կապեց նրա  
մեջքին: Կրկին թեքվելով, շղաճղվեց նա: Աչքերի առաջ  
կրակի շրջանակներ էին լողում:

Ճահճուար բաց թողնելով իր գոնը, ագահաբար ճրփ-  
ճրփացնում էր, վորկերամուլ խողի նման: Վորսորդների  
միջև յեղած տարածությունը գնալով կարճանում էր:

Ազադակելով, նրանց գլխների վերևից անցավ մի  
կարմրազուլե թռչուն և լճի մյուս կողմն անցնելով, յեղ-  
կար տնքաց:

— Մեհ, — վերջապես շունչ քաշեց Մաքսիմիչը, բարձ-  
րանալով լաստենու բնի վրա:

Յերկուսն էլ կպան ծառին, բռնելով նրա ճյուղերից,  
և յերկար ժամանակ լուռ մնացին, յնցվելով ծանր շնչո-  
ւությունից:



4464

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

15401

ՅՄ

1  
1

891.715
G-91

А. С. НОВИКОВ-ПРИБОЙ  
СРЕДИ ТОПИ  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.